

Տարեկան գինը 10 ռուբլ, կէս տարվանը 6 ռուբլ:

ԹԻՖԼԻՍԵԼՄ գրվում են միմիայն խմբագրատան մէջ:

Օտարաբաղադրացիք դիմում են ուղղակի
 Тифлисъ. Редакція „Мшакъ“

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ.

Իւրօրացեալսն մամուլը հայերի մասին— Ն ե ր
ք ի ն տ ե ս ո լ թ իւ ն : Բաթում, Նամակ Ղար-
սիկ, Նամակ խմբագրին : Երեւին լուրեր— Ա ր-
տ ւ ք ի ն տ ե ս ո լ թ իւ ն «Allg. Ztg.» հայերի
մասին : Արտաքին լուրեր— «Աշակ» հեռագրի-
նեք : Գայտապարտութիւններ, — Տեղեկացոյց :—
Բանաստիւրական : Հայրենագիտութիւն և նրա
հայնականութիւնը :

ԵՒՐՈՊԱԿԱՆ, ՄԱՄՈՒԼԸ ՀԱՅՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Նախ քան յայտնվէր արևելեան պատերազմը և ԹՀՆամի զօրքերը պատահէին ասիական Թիւրքիայի մէջ, Հայաստանում, Լւրսպայի համար Հայաստան մի աշխարհագրական գաղափար էր առանց այլ նշանակութեան, հայերի վրա նայում էին իբրև մի ազգի վրա, որ երբէք ընդունակ չէ լինի իր ցանկութիւնները յայտնել և մինչև անգամ ինքնուրոյն կերպով ձգտել: Կային մինչև անգամ այնպիսի մարդիկ, որոնց անյայտ էր հայերի գոյութիւնը:

Վատերազմական զործերը Հայաստանի դաշտերի վրա, հայերի որոշ ուղղութիւն բռնելը իրանց հայրենիքի զործերի մէջ նրանցից մի մասի գաղթականութիւնը գեներալ Տէր-Ղուկասովի հետ դէպի Կովկասը, Թիֆլիսի հայերի ագրէս ներկայացնելը 'Կորին Մեծութեան Ռուսաց Կայսրին, Վանքաղաքի հայերի կրած ֆնսսները

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

ՀԱՅՐԵՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ ԵՒ ՆՐԱ ՆՇԱ-
ՆԱԿՈՒԹԻՒՆԸ

Նախկին թեմական վերատեսուչ արժանապա-
 ար Տէր-Ստեփան Տէր-Ստեփանյանի շնորհիւ
 կայացած ընդհանուր հայ ուսուցչական մանկա-
 վարժական ժողովը, որ եղաւ 1875 թւի օգոստո-
 սմսի մէկից, ընդունել էր պրօգրամայի մէջ
 ծխական ուսումնարաններում աւանդովդ ա-
 ւարականի թեւում և երկու նոր աւարականի,
 որոնք թէև չափ և չափ վաղուց գոյութիւն ու-
 նէին օտար ազգութիւնների բարեկարգված
 դպրոցներում, սակայն անձնօթ էին մեր հա-
 յոց ուսումնարաններին և հետևապէս նրանցում
 ուսում մատակարարող ուսուցիչներին, Նրանք,
 որոնք ծանօթ են յիշեալ նախկին թեմական վե-
 րատեսչի Կախատուի եամբ կազմած պրօգրամ-
 ալային, առանց տարակուսանքի կրմանան, որ
 խօսքս նկատողական ուսումնական և հայրենագիտու-
 թեան աւարականների վրա է:

Յիշեցի, որ այդ առարկաները բոլորովին ան-
ծանօթ էին հայոց ծխական ուսումնարաննե-
րին և նրանց ուսուցիչներին, ուստի և խօսվե-

հրդեհի պատճառով, Կ. Պօլսի երկու հայ լրագրիչների խմբագիրներին գործը, վերջապես երկու արքեպիսկոպոսների ճանապարհորդութիւնը Եւրոպայում և կոնգրէսի ժամանակ Բերլինի մէջ ներկայ գտնվելը — այս բոլորը այնպիսի իրողութիւններ էին, որոնք եւրոպական հասարակաց կարծիքի ուշադրութիւնը ոչ միայն իրանց վրա ձգեցին, այլ և ցոյց տուեցին թէ թիւրքիայի հայերի ցանկութիւնները և ինքնաճանաչութիւնը սկսում է զարթնել, Հայաստանը այսուհետեւ լոկալիստիկ ճաղագրական անուն չէ կազմում եւրոպացու աչքում, այսուհետեւ էլ մի թիւրք գաւառի անուն չէ միայն:

Ի՞նչո՞ւր յիշված անցքերը դարձրին իրանց վրա ամբողջ եւրոպական մամուլի ուշադրութիւնը, եւ չէ կարելի ասել ո՞ր լեզուով էին աւելի շատ յօդուածներ դուրս գալիս՝ ռուսերէն թէ անգլիերէն, ֆրանսիերէն թէ գերմաներէն:

Ռուսաստանի մամուլի գլխաւոր օրգանների հայերի վերաբերութեամբ ցոյց տուած համակրութիւնը ամենքին յայտնի է։ Անգլիան, ոչ միայն գրով այլ և խօսքով, միտինգների մէջ ցոյց տուեց որ ցանկանում է մասնակցել թիւրքաց Հայաստանի ապագայ վեճակների մէջ և 4 յունիսի զաշնագիրը Անգլիային մինչև ան-

ցան գիտեցողների կողմից մի քանի փորձանկան
ղասեր, որոնք ի հարկէ փոքր ի շատէ հասկա-
ցողութիւն տուցին հայ ուսուցչին այդ առար-
կաների բովանդակութեան վրա, մնաց հայ ու-
սուցչին ինքնակրթութեամբ ուսումնասիրել այդ
առարկաները եւ մատակարարել դպրոցներում
իրեն առարկայ,

Հայրենապիտուկները մնաց ամեն տեղ (բայց Ախալքալախի) անգործադրելի, իսկ նկատողական ուռուով մեծ յափշտակութեամբ սկսվեցաւ, բայց թէ այդ սկզբունքը ճիշդան ծայրայեղութիւններին հասաւ և կամ թէ մինչև այսօր ինչքան սխալ ծանուցաբար և վեճանքեր ունեցաւ այդ առարկայի ճանուցիչները անմիտութեան պատճառով, կաշ- խառնելով մի ամէր ապացուցանելով մի այլ առ- դամ, իսկ այժմ կարեորութիւն եմ համարում ան- սել հայրենապիտուկեան օգտաւէտ առարկայի անուշադիր թողնելու վերաբերութեամբ, ցոյց տալով միանշամայն այդ անհրաժեշտ և կարեոր առարկայի աւանդելու եղանակը, որի համար չունենք ոչինչ դասադիրք և ոչինչ խօսված չէ թէր մասին մեր պարբերական հրատարակու- թիւններին մէջ:

Նախ խօսենք թե՛ Բնչ է հայրենագիտութիւնը,
Բնչ է պարունակում իր մէջ և ինչու համար
պէտք է նրան աւանդել մեր տարրական զբա-
րոցներում:

Հայրենագիտութեան նպատակն է հայ հայրենասէր

զամ օրինական պաշտպան դարձ-
րեց այն բոլոր վերանորոգութիւն-
ների, որոնք պիտի յարմար դա-
տէին թիւրբաց Հայաստանի հա-
մար, որոնք անհրաժեշտ պահանջ
պիտի համարվէին:

Ֆրանսիական մամուլն էլ անստես չառաւ հայերին: Գլխավորապէս «Temps» լրագիրն էր որ յօդուածների մի շարք նուիրեց մեր ազգին, պատմելով թէ մեր անցեալը իր բազմակողմանի ձևերով, թէ մեր ներկայ վիճակը, ճշգրտումները և ցանկութիւնները:

Գերմանական մամուլն էլ չէ նայելով իր թուրքասեր հակումներին, որոնք այնքան զարմացնում էին շատերին պատերազմի ժամանակ, այնու ամենայնիւ համակրական յօդուածներ նուիրեց հայերին և փոքր ազդեցութիւն չէ գործեց դրա վրա տաճկահայերի պատգամաւորութիւնը Ռեյնլանտ, որի հետ շատեր ծանօթանալով ճանաչեցին հայերի իրաւունքները և պահանջները: Այսպէս զանազան գոյների, զանազան կուսակցութիւնների լրագիրներ, թէ մայրաքաղաքի թէ գաւառների անընդհատ տալիս էին փոքր և մեծ յօդուածներ հայերի և Հայաստանի մասին, և ամենքն էլ անխտիր, որ կուսակցութեան և պատկանէին նրանք, համակրութիւն էին ցոյց տալիս հայերի

Նեկ հայրենիքի հետ նկատողական շաղկով, պարունակվում է իր մեջ աշխարհագրութեան բոլոր տարերքը և ծառայում է զրանց ուսանելու համար իբր հիմնադր պատրաստութիւն:

Աշխարհագրությունը զննում է երկրագնդի մակերևույթը երեք կողմից. նախ՝ երկնային մարմինների կողմից. երկրորդ՝ բնական կողմից և երրորդ՝ մարդու ձեռքով գործված փոփոխությունները կողմից: Աշխարհագրությունը ուսուցանելու նպատակն աշխարհագրական օբյեկտներ կազմում են — երկնային աստղերը, քարտեզները, այսինքն առարկաների պատկերները և ոչ ինքնաշեն առարկաները, և բացի սրանից աշխարհագրությունը ուսուցանում է քարտեզների նկարչությունը: Ամենայն առարկայի դասաստիճությունը որքան կարելի է պէտք է լինի նկատողական ձևով: Հայերենագրությունը սովորելու ժամանակ մասնուկները ծանոթանում են աշխարհագրական երեւոյթների հետ ոչ թէ գրքերով և քարտեզներով, այլ իսկական առարկաները անձամբ շնորհապատելով: Երբ որ մասնուկները սովորում են մի որ ինչ տեղի մասին և շնորհապատում են բնութեան մի քանի երեւոյթներ, նրանք լաւ ծանոթանում են ջրերի և ցամաքի մասերի, տեղի և պտղաբերականութեան և այլ և այլ հատկանշաների հետ, որով նորա կը կարողանան համեմատել քաղաքը չէնի հետ, քաղաքացիները պարագլուխները չինականների պարագլուխների

Խմբագրատունը բաց է առևտրեան 10-2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերից) :

Յայտարարութիւնները ընդունվում են ամէն 1 եղբւոյ

Յայտարարուիլնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կօպէկ:

պահանջներին: «Մշակի» ընթեր-
ցողը կը յիշէ անկասկած ինչպէս
էր վերաբերվել իշխան Բիսմարկի
օրգանը Nordd. Allg. Ztg. և հակա-
ռակ, առաջադէմ կուսակցութեա-
նը պատկանող Voss. Ztg. վերջա-
պէս ներկայ համարում ընթերցո-
ղը կը տեսնի Allg. Ztg.-ից քաղած
մի նամակագրութիւն, որից երե-
ւում է թէ համակրութիւնը դե-
պի հայերը շարունակվում է գեր-
մանական մամուլի մէջ:

Եւրօպական հասարակաց կարծեքի թիւրքիայի հայերի կողմը լինելը անկասկած մի գրաւական պիտի լինի, որ թիւրքաց հայաստանին խոստացած վերանորոգութիւնները լոկ խոստում՝ չեն մնայ, այլ կը դառնան իրականութիւն:

Ա. Արծրունի

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԲԱԹՈՒՄ

«ГОЛОСЪ» լրագրի սեփական թղթակիցը Բաթումից օգոստոսի 17-ին գրում է հետեւեալը. «Թիւրքաց «Կայսեր» շղթենաւը, որի վրա ինձ պատահեցաւ Տրապիզոնից Բաթում գնալ, բոլորովին լրված էր ծանապարհորդներով—Տրապիզոնի բոլոր մանր վաճառականներով՝ հայերով և յոյներով։ Նրանք բոլոր զիտէին արդէն, որ բոլոր մաճմետական ազգաբնակութիւնը զենաթափ է եղել, և Բաթումի վերջնականապէս դատարկվելու և նրան մեր զօրքերով գրաւելու ժամանակաւ»։

հետ, քաղաքի պտղաբերութիւնը գիւղական
պտղաբերութեան հետ:

Հայրենագիտութեան ուսմունքի մատակարար-
թումը սերտ կապ ունի միւս առարկաների հետ
և միասնագ է առաջ ընթանում: Հայրենագի-
տութեան ուսուցիչը վարժեցնում է երեխանե-
րին պարզաբանութեան մէջ, ուղղում է աշա-
կերտներին իւրաքանչիւր բանաւոր և գրաւոր
միտայնելը, պահանջում է նրանցից լրակաւ տա-
լալով և որոշ պատասխաններ. ուրեմն նա օգ-
նում է մայրենի լեզուի ուսուցչին: Իր կողմից
էլ պարենի լեզուի ուսուցիչը կարող է օգնել
հայրենագիտութեան ուսուցչին, քերականական
կանոնների վարժութիւնների ծաւանակ օրինակ-
ները տալով այն կտորներէց, որ սովորել են մա-
նուկները հայրենագիտութենից: Հայրենագի-
տութեան ուսուցչիւր տալով ուսուցիտներին մի
որ և իյէ գրաւոր պարագայունք, պահանջում է՝
որ տուած գործը գրված լինի գեղեցիկ և որոշ,
ուրեմն նա օգնում է վայելչագրութեան ուսուց-
չին Նկարել տալով դասատան, բնակված
սենեակի և շրջակայ տեղերի մակարդակը (Планы),
պահանջում է, որ գծերը լինեն ըստ պատշաճի
ուղիղ կամ թեք, գործը մաքուր. ուրեմն նա օգ-
նում է գծագրութեան և նկարչութեան ուսուցչի-
ներին: Չափերով տեղերի երկայնութիւնը, բարձ-
րութիւնը և այլն, աշակերտները վարժվում են
համարի մէջ. ուրեմն այստեղ թւաբանութեան

գոյն հոգեւոր իշխանութեան կարգադրութեանը, որից կարելի է վարժապետները նշանակելը ապահով ունենալով վիճակային կամ մերձակայ հարուստ վանքերի արքեւանդները կամ մի այլ հաստատուն աղբիւրներից, ինչպէս 1876 և 1877 թվերում տեղական հայոց լրագրութեան միջնորդութեամբ առաջարկել ենք: Մասնաւոր նուիրատուութիւններ կամ մասնաւոր փոխանակումը և միաժամանակ, որոնց յայտով դժուար թէ որ և իցէ հնուապետ վարժապետ համաձայնելի զալ և պարագել վանքում, ուր նա քիմիայի ֆէրի սենեակ և վառելիքայայտ ստանալ կարող է: Վասնորոյ այս նամակում յայտնում ենք ի դիտութիւն հոգեւորական կոչման պատրաստվող գիւղացի ցանկացողներին, որ եթէ վաճառում են կատարելագործել իրանց ուսումը հայոց գրաբան լեզուով, մենք պատրաստ ենք ուրախութեամբ և ամենախորով ձրի աւանդել նրանց գրաբան և աշխարհագրութեան սանձանքով առարկայք, ինչպէս մինչև այսօր ձրիաբար, մեր կարողութեան չափ աւանդել ենք ծխական դպրոցի առարկայքը հարկուաւոր երթեկ աշակերտներին: Ցանկացողները պէտք է ունենան իրանց հագուստը և հացը, որ այս աղքատ վանքը չունի հնար տալու նրանց:

Վերջացնելով նամակ պարտաւորութիւն եմ համարում յիշել, որ թէ և վանական դպրոցի կարողութիւնները շատ շատ են, բայց ամենակարևոր գործերը և շինութեան մնացորդը վերջացնելու աղաղակ (որոնք դադարված են պատերազմի, նիւթեղէնի ստանդարտի թանգութեան և դրամական միջոցների պակասութեան պատճառով) դեռ ևս դպրոցի հոգաբարձութիւնը մեծ կարողութիւն ունի ձեռնարկութեան ազգայնոց, վասնորոյ խոնարհաբար հրաւիրում ենք նոցա ուշադրութիւնը այս ազգային գործի վրա, խնդրելով, որ շարունակեն ուղարկել իրանց նուիրատուութիւնները ուղղակի ի ձեռն հոգաբարձութեան դպրոցի ի գիւղն խաչակապ Գանձակի գաւառի, կամ միջնորդութեամբ մեծապատիւ խնամակալ դպրոցի պ. Ն. Տէր-Ներսէսեանցի վանն հասուցանելով ի ձեռն նուիր հոգաբարձութեան:

Ամեն մի նուիրատու կամ հայ ազգի այցելու, երբ և կամենայ կարող է տեսնել հոգաբարձութեան հաշիւը, եկեղեցական և դպրոցական կայքերի տուժանքները դպրոցի մէջ, մինչև նրա առաջադրութեամբ հրատարակելը իր ժամանակին ի գիտութիւն և ի գննութիւն հայոց հասարակութեան: Վաճառայր Ս. Թարգմանչաց վանի և դուռնիք վանական դպրոցի:

Թեոդորոս վարդապետ Շիրակունի:

ՆԵՐՏԻՆ ԼՈՒՐԵՐ

ԲԱԳՈՒՆՑ ԳՐՈՒՄ ԵՆ «Տեղական բարեկարգ թաղէն աւագ-քահանայ Բուդաղեանց ներկայ տարվայ սեպտեմբերի 1-ին որդեգիր վեր առաւ իր հաշուով Բագուի բնակական գիմնադրում ուսանելու երեք աղքատ աշակերտներ, որոնցից առաջինը արդէն նոյն քահանայի հոգաբարձութեամբ պատրաստվելուց յետոյ մտաւ երկրորդ դասարանը: Հրաւիրում ենք մեր հարուստ հայերին հետեւել արժ. հօր օրինակին և մի մի որդեգիր ունենալ Բագու բնակվող աղքատ հայերի զաւակներից, որոնք նիւթական միջոց չունենալով, զուրկ են մնում ուսումից:»

«Երկու ոչ տեղացի հայեր, գրում են մեզ ԳԱՆ-ՉԱԿԻՑ:» Դիտարկութիւն ունեն գրականական երկից տալ յօգուտ և լրարատեան ընկերութեան: Գանձակում առաջին անգամ կազմում են այդպիսի երեկոյ:»

ՇՈՒՇՈՒՑ մեզ գրում են: «Մի ամիս է, որ շատ քիչ անգամ ենք տեսնում արևի երեսը: Անձրեանքը չեն դադարում, դաշտերը սկսել են նորից կանաչել և ծաղիկներով ծածկվել, կարծես բնութիւնը հուսով համար նոր գարունը է պատրաստում: Այժման անձրեանքը փնտաւար են գիւղացու համար, ցորենը կալի վրա կը սկսի ծլիլ և խոտը կը փոխ: Այսօր պուրը արժէ 1 ռուբլ 20 կոպէկ, ածուխի բնուր, որ առաջ 50 կոպ. արժէր, այժմ ծախվում է 1—2 ռ., իւղի պուրը 11—12 ռ., պանիրը 4—5 ռ., մրգեղէնը շատ է ժան է:»

Մեզ գրում են ՇՈՒՇՈՒՑ, որ տեղացիք սկսել են ընտանիքներով ուրիշ քաղաքներ գաղթել: Օրերս մեկ տուն գաղթել են Գանձակ և Բագու: Պատճառը հասկանալի է, աւելացնում է

նամակագիրը, չուչեցիք այս առածին են հետեւում. «որտեղ հաց, այնտեղ կաց:»

ՆԵՐՏԻՆՑ մեզ հաղորդում են, որ սեպտեմբերի 18-ին սաստիկ անձրև եկաւ, որից գոյացած հեղեղը փնտսեց մի քանի այգիներ, վնասը բաւական աննշան է:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՆ

«ALLG. ZTG.» ՀԱՅԵՐԻ ՄԱՍԻՆ

Առգործողի լրագրի № 268 մէջ կարդում ենք հետեւեալ նամակ Բէրայից: Ճատ ծանր են Հայաստանից եկող լուրերը: Աւելի քան մի ամիս ի վեր այստեղի հայոց պատրիարքին համարում էին Հայաստանից մի հեռագիր միւսից յետոյ, որոնց մէջ յայտնվում է, որ դրութիւնը անտանելի է դառնում քրդերի, չրկէաների և արձակված թիւրք զինուորների կողմից կատարվող չարագործութիւններից, չը նայելով գեղեցիկ խոստումներին վրա թէ Բ. Դրան, թէ անգլիացիների կողմից, որոնք պէտք է վարձատրէին հայերին իրանցից բռնած օրինաւոր ընթացքի համար պատերազմի ժամանակ և այն զոհարարութիւններին համար որ նրանք տարան հայրենիքի պաշտպանութեան համար: Նրանք յայտնում են որ եթէ նրանց դրութիւնը չը փոխվել, նրանք ստիպված պիտի լինեն գաղթել խրմբովին գէպի Ռուսաստան, որ գոնեա իրանց կեանքը փրկեն: Պատրիարքը անյապաղ դիմեց մեծ վեղերին և անկասկած է որ երկուսի համար էլ այդ գաղթականութիւնը անախորժ պիտի լինէր: Բայց Դուռն մինչև այժմ բաւականացել է խոստումներով:

«Անգլիան էլ աւելի փառաւոր խոստումներ տուեց բայց պատրաստ է այժմ յայտնել որ Բերլինի դաշնադրի յօդուածները նրա համար պարտադիր չեն, իսկ անգլիական հիւպատոս պ. Պէլգրավը (Palgrave) դեռ նորերումս «Times»-ի մէջ յայտնեց, որ ոչ Հայաստան ոչ էլ հայոց ազգ կայ, ուրեմն մի խեղդութիւն է մի չեղող ազգին որ և իցէ բան չորհելու Ս. պատճառով գաղթականութիւնը մեծ չափով սկսվել է գլխաւորապէս Երզրումից, Խնիսից, Արշակունի գաւառից և Վանից: Որովհետեւ Հայաստանի ձմեռը արդէն սեպտեմբերի վերջերին է սկսվում, գաղթականները շտապում են որ գորանից առաջ հասնեն Ռուսաստանի սահմանները: Անգլիան 4 յունիսի պայմանագրով խոստացել է Թիւրքիային ապահովանել դրա ասիական երկրները—որոնց հայկական մասը այժմ պիտի այրակերպվել և դառնայ մի ամայի և վայրենի երկիր որտեղ կը թափառեն քուրդեր և չրկէաներ:»

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

«Արշալոյս Արարատեան» լրագիրը հաղորդում է հետեւեալ. «Յաւախ արտի կիմանամբ թէ Կ. Պոլսոյ «Նոր Գար» լրագրոյն խմբագրապետ և արտօնատէր Օգսէն Էֆէնտին խօսաւորեան թիֆլիզի գոնդակ հիւանդութեամբ, առ Աստուած փոխուէր է ի հասակի 45 ամաց, անմիջապէս սգոյ և աղքատութեան մէջ թողնվող զգեալով լծակցին և զգաւական իւր:»

«Մասիս» մէջ կարդում ենք. «Աղգային ժողովն երէկ արտաքուր կարգի նիստ մ'ըրաւ Ղալաթիոյ եկեղեցին, ընդ նախագահութեամբ Ս. Պատրիարք հօր: Ինչպէս արդէն ծանուցուած էր, գումարման նպատակը կարնոյ և չրկականց գաղթականութեան խնդիրն էր, որոյ պատճառները վերցնելու և հետեւաբար առաջն առնելու համար Ս. Պատրիարք հօր երկու երեք շաբաթ է ի վեր ըրած անձնուէր ջանքն ազգային վարչութեան խառն ժողովը գոնութեամբ տեսնելով, Ն. Սրբազանորթեան աւելի ուժ և քաջակրօնութիւն տալու համար Ազգ. ժողովոյ դիմեր էր յատուկ գրով մը: Ժողովը խնդրոյն կարեւորութիւնը հկատելով, թիւրիմացութեան և այլ ընդ

այլ սխալ մեկնութեանց և տարաձայնութեանց աւելի չտալու համար» նիստը դռնփակ ընել որոշեց, և խնդրեց Ս. Պատրիարքէն որ իւր ըրած գործողութիւնները մանրամասնաբար ծանուցանէ ժողովին: Ն. Սրբազանութիւնն ալ իւր բոլոր ջանից և տեսակցութեանց պարագաները մի առ մի ծանոյց ազգ. ժողովին, որ զո՞հ ըլլալով հետեւալ որոշումն ըրաւ. միաձայնութեամբ. «ազգային ժողովս ցաւօք արտի լսելով կարնոյ և չրկականց Հայ ժողովրդոց իրենց կեանքն, ստացուածքն ու պատիւն անպահով վիճակի մէջ տեսնելուն համար բազմութեամբ գաղթականութեան դիմելուն վրայ ամեն. Ս. Պատրիարք հօր տուած տեղեկութիւններն, և այս մասին թէ Բ. Դրան և թէ հսկող տէրութեանց դեսպաններուն քով ձեռք առնուած միջոցները գոնութեամբ լսելով, կը յանձնարարէ Նորին Սրբազանութեան և Ազգ. վարչութեան» Հայաստանի Հայ ժողովրդոց ապահովութեան և բարեկարգութեան պիտոյից ստիպողականութիւն տալ և պէտք եղած ազգու միջնորդութիւնը կատարել թէ Բ. Դրան և թէ հսկող տէրութեանց դեսպաններուն քով, և կանցնի իւր օրակարգին: Երեկուան Ազգ. ժողովոյ մէջ Ս. Պատրիարք հօր տուած տեղեկութիւններէն հասկցուցաւ թէ մարաքաղաքին Անգլիական դեսպանը կարնոյ կուսակալ Խմայիլ Հազգի փաշան փոխել տալու խոստում չէ ընել:»

«Allg. Ztg.»-ին Կ. Պոլսից հաղորդում են հետեւեալ. «Հանքերի և անտառների կառավարութիւնը կրկին բաժանվեցաւ ֆինանսների միւնիստրութիւնից և յանձնվեցաւ մի հայի, Պետրոս Էֆէնդի Բոթուպչեանին, որ պետական խորհուրդի նախկին նախագահ էր և դրա պաշտօնակատարութեան սկսվելուց յետոյ արդէն երեք կոնցեսիոներ արկեցան հանքերը մշակելու համար թէ եւրօպական, թէ ասիական թիւրքիստում:

ՄՇԱԿԻ ՀՆՈՒԱԿԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՐԳ, 21 սեպտեմբերի (3 հոկտեմբերի): «ГОЛОСЪ» լրագրին հեռագրում են Կ. Պոլսից: Մեծ վեղերը դիմեց Կ. Պոլսի հայոց պատրիարքին, հրաւիրելով նրան պատուիրել Երզրումի արքեպիսկոպոսին՝ յայտնել հայոց ազգաբնակչութեանը որ Բ. Դուռն անյապաղ գործ կը ընի անհրաժեշտ միջոցներ Հայաստանում պատահող անկարգութիւնները զսպելու և յանցաւորներին օրինակելի կերպով պատժելու համար: Այդ հրաւերը ստանալով պատրիարքը յայտնեց Սովֆէտփաշային որ ինչպէս Կ. Պոլսի հայերը այնպէս և Ասիայի հայերը այլ ևս ոչինչ հաւատ չեն ընծայում թիւրքաց տէրութեան խոստումներին: Այդ հանգամանքը աչքի առաջն ունելով պատրիարքը պնդում է որ Հայաստան ուղարկվել մի եւրօպական յանձնաժողով, որին արվեն լիազոր իրաւունքներ զեղծումները քննելու համար, որ կատարվեն վերանորոգութիւններ Հայաստանի տեղական վարչութեան մէջ և վերջապէս որ կազմակերպվեն ազգային միելեցիա: Ասում են որ Լալարը իր կողմից միջնորդում է Բ. Դրան ձեռք, որ Երզրումի վեղայեթում նշանակվել մի նահանգապետ հայերից, այն նպատակով որ արդէն զբղի այդ երկրի մէջ ծագած գաղթականութեան շարժման:

Ս. ՊԵՏԵՐԲՈՐԳ, 23 սեպտեմբերի: Պետական բանկի 5% տոմսակր առաջին շրջանի արժէ 96 ռ. 75 կ., երկրորդ 95⁵/₈ ռ. երրորդ 95 ռ. 75 կ., չորրորդ 95⁷/₈ ռ., ներքին 5% առաջին փոխառութեան տոմսակր արժէ 231 ռ. 75 կ., երկրորդ 227 ռ. 75 կ., արեւելեան 92 ռ. 75 կ., ոսկի 8 ռ. 15 կ.: Ռուսաց 1 ռուբլ Լօնդոնի վրա արժէ 24¹/₁₆ պէնս, ռուսաց 100 ռուբլ Գերմանիայի վրա արժէ 205 մարկ, Փարիզի վրա 251 Փրանկ 50 սանտիմ: Տրամադրութիւնը հանգիստ է: ԼՕՆԴՈՆ, 23 սեպտեմբերի (5 հոկտեմբերի): Սիւլայից հեռագրում են: Վսում են, որ բրիտանական զօրքերը Պէշաւէրից գնում են Իջուղա Ալեմուսկի վրա յարձակվելու հա-

մար: Եմիրը իր զօրքերը քաշում է դէպի Ալեմուսկի: Կօնդաբարէ սպառնում է Կվետէին: Պատերազմական պաշարը հաւաքվում է Կօնդալում: Հէյրերական ցեղերի և աֆգանիստանցիների մէջ մեծ թշնամութիւն է նորմարվում: Աֆգանիստանցիները սպառնում են յարձակվել հէյրերական ցեղերի վրա բրիտանական դեսպանութեան իրանց երկրից անցկացնելու համար: Սպասում են, որ բրիտանական զօրքերը կօգնեն հէյրերական ցեղերին:»

Կ. ՊՕԼԻՍ, 23 սեպտեմբերի (5 հոկտեմբերի): Պօլզօրիցան Ձերնօգորիայի յանձնելուց յետոյ թիւրքաց հաւատարմաւորները 136 օֆիցերներից և զինուորներից բաղկացած պահապանների հետ սպանված են ալբանիացիներից:

Ս. ՊԵՏԵՐԲՈՐԳ, 24 սեպտեմբերի: «НОВОЕ ВРЕМЯ» լրագրին Կ. Պոլսից հեռագրում են, որ սուլթանը մերժեց պ. Լայարդի ներկայացրած Փաքր-Ասիայի վերանորոգութիւնների նախագիծը:

ՊԵՏԸ, 22 սեպտեմբերի (4 հոկտեմբերի): Ասում են, որ ունգարական միւնիստր-նախագահ Տիսաս յայտնեց կայսր Ֆրանց-Յովսէֆին, որ ունգարական միւնիստրութիւնը չէ ցանկանում որ և է համաձայնութիւն և պնդում է իր հրաժարականի վրա:

ՌՈՒՇՁՈՒԿ, 21 սեպտեմբերի (3 հոկտեմբերի): Ռուսաց զօրքերի ընթացքը դէպի Ռուսաստան կանգնեցրած է քաղաքական հանգամանքների փոփոխման պատճառով:

Ս. ՊԵՏԵՐԲՈՐԳ, 24 սեպտեմբերի: «ГОЛОСЪ» լրագրին Կ. Պոլսից հեռագրում են, որ ռուսաց զօրքերի Կուիկէկմէշեան կամուրջը անցնելուց յետոյ ֆանատիկոս մահմետականներ յարձակվեցան քրիստոնեաների վրա և նրանց բաւական մեծ թւով ջարդեցին:

Ս. ՊԵՏԵՐԲՈՐԳ, 24 սեպտեմբերի: «ПРАВДА. ВЪСТЯ.» լրագրի մէջ տպված է գնեւրալ Տօպլէքէնի Արքիանօպօլցի Թագաւոր Կայսրին ուղարկած հեռագիրը, որով գնեւրալը յայտնում է, թէ Բուրգասի, Այդոսի, Կարնաբադի և Նամօօլի բնակիչները խնդրում են յայտնել Թագաւոր Կայսրին իրանց խորին երախտագիտութիւնը ազատութեան համար: ԼՕՆԴՈՆ, 24 սեպտեմբերի (6 հոկտեմբերի): Հաղորդում են Կ. Պոլսից, որ սուլթանը Լայարդին տուեց դրական խոստում Փաքր-Ասիայում անգլիական վերանորոգութիւնների նախագիծը ընդունելու մասին:

ՊԵՏԸ, 24 սեպտեմբերի (6 հոկտեմբերի): Ֆրանց-Յովսէֆ կայսրը ընդունեց ունգարական միւնիստրութեան հրաժարականը. մինչև նոր միւնիստրութեան կազմվելը հին միւնիստրութիւնը գործելու կը վարի:

Կ. ՊՕԼԻՍ, 24 սեպտեմբերի (6 հոկտեմբերի): Լայարդ գնաց Արտակայի ծոցը:

ՍԻՄԼԱ, 25 սեպտեմբերի (7 հոկտեմբերի): Հնդկաստանի լրագիրները հաղորդում են, որ անգլիական զօրքերը գրաւեցին Ալեմուսկի: Լրագիրները այսօր սպասում են Հնդկաստանի կառավարութեան շրջաբերականի հրատարակման, որով նա կը մեկնի իր դիտաւորութիւնները: Աֆգանիստանի Եմիրը հրաւիրեց սահմանակից ցեղերի ներկայացուցիչներին:

Ս. ՊԵՏԵՐԲՈՐԳ, 26 սեպտեմբերի: Պետական բանկի 5% տոմսակր առաջին շրջանի արժէ 96 ռ. 50 կ., երկրորդ 95 ռ. 75 կ., երրորդ 95⁵/₈ ռ., չորրորդ 95 ռ. 75 կ., ներքին 5% առաջին փոխառութեան տոմսակր արժէ 232 ռ., երկրորդ 228 ռ., ոսկի 8 ռ. 17 կ.: Ռուսաց 1 ռուբլ Լօնդոնի վրա արժէ 24¹/₁₆ պէնս: Տրամադրութիւնը հանգիստ է:

